«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Ալաշկերտ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcalashkert.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28.03.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-134
Խախտում՝	1. Տուգանային հրապարակի գծի ուղղությամբ տեսախցիկների բացակայությունը (Հավելված 1 Ա, 76-րդ կետ) 2. «Ալաշկերտ-2» թիմի ադմինիստրատոր Աղվան Մկրտչյանի (238) մրցավարին վիրավորելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խումբ
Խաղ՝	«Ալաշկերտ-2» - «Արարատ 2», 17.03.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետով և հաշվի առնելով նույն մրցաշրջանում «Ալաշկերտ-2» թիմի ադմինիստրատոր Աղվան Մկրտչյանի (238) կողմից համանման խախտման կրկնելիությունը՝ վերջինիս որակազրկել 5 (հինգ) խաղով:
   Որակազրկումը տարածվում է 2023 թվականի մարտի 17-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղ, պայմանականորեն չկիրառել:

«Ալաշկերտ-2» թիմի ադմինիստրատոր Աղվան Մկրտչյանի (238) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի մայիսի 17-ը ներառյալ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: